ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
«ՀԱՐԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
(Կ-561-14.04.2023-ՏՀ-011/0) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	Նախագծով նախատեսվում է ուժը կորցրած ճանաչել քննչական մարմնին վերաբերող «Հարկային ծառայության մասին» օրենքի 8.1-ին հոդվածը և հարկային ծառայողի օրենքով սահմանված դեպքերում և կարգով քրեական վարույթ նախաձեռնելու և նախաքննություն կատարելու պարտականությունը, ինչի արդյունքում համապատասխան դրույթի գործողությունը դադարեցվում է: Միաժամանակ, Նախագծին կից հիմնավորմամբ սահմանված է, որ Պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչությունը 2023 թվականի հունվարի 1-ից փոխանցվել է ՀՀ քննչական կոմիտեի համակարգ, ինչից բխում է, որ 2023 թվականի հունվարի 1-ից «Հարկային ծառայության մասին» օրենքի փոփոխվող դրույթներն արդեն	Ընդունվել է: Նախագծի 2-րդ հոդվածում Նախագծի հետադարձության հետ կապված կարգավորումը հանվել է:	Ընդունվել է:

			իսկ կիրառելի չեն եղել հարկային ծառայողների վրա, հետևաբար, Նախագծով նախատեսված դրույթներն ուժը կորցրած ճանաչելու արդյունքում 2023 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունները փաստացի բացակայում են: Ուստի, առաջարկում ենք Նախագծի 2-րդ հոդվածում Նախագծի հետադարձության հետ կապված կարգավորումը հանել:		